ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԿԱՐԱՊԵՏ ԲԱԶԻԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն անվանի ուռուցքաբան, պրոֆեսոր Կարապետ Բազիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Եզնիկ Կողբացու փողոցի h.42 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱՐԱՊԵՏ ԲԱԶԻԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարապետ Բազիկյանը ծնվել է 1924թ., սեպտեմբերի 24-ին, Սալոնիկ /Հունաստան/ քաղաքում:

1947թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: 1953թ. եղել է Հանրապետական ուռուցքաբանության դիսպանսերի (1999 թվականից՝ Կարապետ Բազիկյանի անվան) գլխավոր բժիշկ:

Կարապետ Բազիկյանը երկար տարիներ դասավանդել է Երևանի պետական բժշկական համալսարանում, վարել է ակտիվ հասարակական գործունեություն՝ բազմիցս ընտրվելով շրջանային և քաղաքային խորհուրդների պատգամավոր:

1986-1989թթ. եղել է ԽՍՀՄ ուռուցքաբանական ընկերության պատվավոր անդամ:

Կարապետ Բազիկյանի ղեկավարությամբ Հայաստանում ստեղծվել և կատարելագործվել է ուռուցքաբանական ծառայությունը, ամբողջ հանրապետության պոլիկլինիկաներում բացվել է ավելի քան 60 ուռուցքաբանական կաբինետ:Նրա աշխատանքները վերաբերում են Հայաստանում չարորակ ուռուցքների համաճարակաբանության, ուռուցքաբանության ծառայության կազմակերպման և պատմության հարցերին: Բազիկյանը ավելի քան 80 գիտական աշխատանքների և դասագրքերի, այդ թվում նաև «Քաղցկեղի համաճարակաբնությունը Հայաստանում և կանխարգելման հարցերը» մենագրության /1972/ հեղինակ է: Մինչև կյանքի վերջ Բազիկյանը ղեկավարել է Հանրապետական ուռուցքաբանական դիսպանսերը և զբաղեցրել է առողջապահության նախարարության գլխավոր մասնագետի պաշտոնը, իր կազմակերպչական գործունեությունը ծառայեցրել Հայաստանի Հանրապետությունում ուռուցքաբանության ծառայության ընդլայմանը և զարգացմանը:

Կարապետ Բազիկյանը մահացել է 1989թ. դեկտեմբերի 6-ին, Երևանում:

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարապետ Բազիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Եզնիկ Կողբացու փողոցի հ.42 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է նրա որդու՝ պրոֆեսոր Գագիկ Բազիկյանի կողմից: Հուշատախտակի տեղադրման ծախսերն իրականացվելու են Կարապետ Բազիկյանի ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ